



ԻՆՖՈՐՄԱՏԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 099 11 30 99
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

05.02.2013թ.
193-ի 7

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Արթուր Նալբանդյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Նալբանդյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Իրականացվում է արդյոք ՀՀ Լոռու մարզպետարանի ստացած էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառում,
2. Եթե այո, ապա էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառումն իրականացվում է առանձին, թե ընդհանուր:
3. Քանի՞ էլեկտրոնային հարցում եւ դիմում է ստացել ՀՀ Լոռու մարզպետարանը 2012թ.-ին (եթե էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառումն իրականացվում է առանձին, ապա խնդրում ենք տրամադրել հարցումների քանակն առանձին, դիմումներինը՝ առանձին):

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան

Գեորգ Հայրապետյան